*ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

*<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ, 9-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2007 թվականի օգոստոսի 8-ի N 980-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխան համայնքային սեփականություն հանդիսացող 0.15հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողեր կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակությամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշմամբ հաստատված Սիսիան քաղաքի գլխավոր հատակագծի 0.15հա հողամասը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողեր կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակությամբ է, իսկ հերթապահ էլեկտրոնային քարտեզում՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման: Ուստի համայնքի վարչական տարածքում առկա հողօգտագործումները կարգավորելու համար անհրաժեշտ է ուղղել կադաստրային քարտեզում առկա անճշտությունը՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.15հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողեր կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակությամբ և համապատասխանեցնել Սիսիան քաղաքի գլխավոր հատակագծին:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19.05.2020թ

---

*ՏԵՂԵԿԱՆՔ*

*<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19.05.2020թ